## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
## կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին

ՀՀ քաղաքաշինության կոմիտեն, որը գտնվում է ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3 հասցեում ստորև ներկայացնում է իր կարիքների համար առաստաղի լուսավորման սարքերի ձեռքբերման նպատակով կազմակերպված ՀՀՔԿ-ՄԱԱՊՁԲ-19/3 ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 2019 թվականի մարտի 28-ին կնքված N ՀՀՔԿ-ՄԱԱՊՁԲ-19/3 պայմանագրում 2019 թվականի ապրիլի 23-ին կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

| | |
|---|---|
| Փոփոխության առաջացման պատճառ | Ապրանքների չափաքանակներով մատակարարման ժամկետների հստակեցում: |
| Փոփոխության նկարագրություն | Մատակարարման ժամկետների փոփոխություն: |
| Փոփոխության հիմնավորում | Պայմանագրի 8.5 կետ: |

Պատվիրատու՝ Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտե

# ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1

## 28.03.2019թ. կնքված N ՀՀՔԿ-ՄԱԱՊՁԲ-19/3 գնման պայմանագրի

ք. Երևան 23.04.2019թ.

ՀՀ քաղաքաշինության կոմիտեն (այսուհետ՝ Գնորդ)՝ ի դեմս կոմիտեի գլխավոր քարտուղար Ա. Մկրտչյանի, որը գործում է կոմիտեի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և <<ԼԱՅԹԻՆԳ>> ՍՊԸ-ն (այսուհետ՝ Վաճառող)՝ ի դեմս ընկերության տնօրեն Մ. Վարդանյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից՝ երկուսը միասին (այսուհետ՝ կողմեր), հիմք ընդունելով առաստաղի լուսավորման սարքերի մատակարարման 28.03.2019թ. կնքված N ՀՀՔԿ-ՄԱԱՊՁԲ-19/3 գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 8.5 կետը, կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

### 1. Համաձայնագրի առարկան

1.1 Կողմերը որոշեցին Պայմանագրի N 1 հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն Համաձայնագրի հավելվածի:

### 2. Այլ պայմաններ

2.1 Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Համաձայնագրում կողմերի համար չնշված՝ Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները մնում են անփոփոխ:

2.3 Համաձայնագիրը կազմված է 1 (մեկ) էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

Համաձայնագրի հավելվածը բաղկացած է 2 (երկու) էջից և համարվում է Համաձայնագրի անբաժանելի մասը:

### 3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝ | ԿԱՊԱԼԱՌՈՒ՝ |
|---|---|
| ՀՀ քաղաքաշինության կոմիտե<br>ք. Երևան, Հանրապետության հրապարակ<br>կառավարական տուն 3<br>ՀՀ ֆինանսների նախարարության<br>աշխատակազմի գործառնական վարչություն<br>Հ/Հ 900011011724<br>ՀՎՀՀ 02565827 | <<ԼԱՅԹԻՆԳ>> ՍՊԸ<br>ք. Երևան, Վարդանանց 26,<br><<Ամերիաբանկ>> ՓԲԸ<br>Հ/Հ 1570025073070100<br>ՀՎՀՀ 02613298 |
| Գլխավոր քարտուղար՝<br>_________ Ա. Մկրտչյան<br>(ստորագրություն)<br>Կ.Տ. | Տնօրեն՝<br>_________ Մ. Վարդանյան<br>(ստորագրություն)<br>Կ.Տ. |

Հավելված
28.03.2019թ. կնքված N ՀՀՔԿ-ՄԱԱՊՁԲ-19/3 պայմանագրի
23.04.2019թ. կնքված համաձայնագիր N 1-ի

<<Հավելված N 1
28 .03.2019թ. կնքված
N ՀՀՔԿ-ՄԱԱՊՁԲ-19/3 պայմանագրի

# ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

| Ապրանքի | | | | | | | | մատակարարման | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Հրավեր-ով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | տեխնիկական բնութագիրը | չափման միավորը | միավոր գինը/ՀՀ դրամ | Ընդհանուր գինը/ՀՀ դրամ | Ընդհանուր քանակը | հասցեն | ենթակա քանակը | Ժամկետը |
| 1 | 31521500-1 | Առաստաղի լուսավորման սարքեր | Առաստաղին ամրացվող լուսատու /երկու լեդ լամպով/՝ նախատեսված խողովակաձև լեդ տիպի լամպերի համար՝ 120 սմ երկարությամբ, 16, 20, 22 Վտ անվանական հզորությամբ, լույսի գույնը՝ սպիտակ: Անվտանգությունը՝ ըստ ՀՀ կառավարության 2015թ. մարտի 19-ի N 285-Ն որոշմամբ հաստատված «Ցածր լարման էլեկտրասարքավորումների անվտանգության տեխնիկական կանոնակարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի փետրվարի 3-ի N 150-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին»: | հատ | 14700 | 588000 | 40 | ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3, 4-րդ հարկ | 20 | Պայմանագիրը ստորագրվելու օրվան հաջորդող չորրորդ աշխատանքային օրվանից հաշված 45-րդ օրացուցային օրը ներառյալ |
| | | | | | | | | | 10 | մինչև 20.09.2019թ. ներառյալ |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | | | 10 | մինչև 10.12.2019թ. ներառյալ |

>>:

**Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ Ո Ւ**

Հայաստանի Հանրապետության
քաղաքաշինության կոմիտե
ք. Երևան, Հանրապետության հրապարակ,
կառավարական տուն 3,
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011011724, ՀՎՀՀ 02565827

Գլխավոր քարտուղար՝

__________ Ա. Մկրտչյան
(ստորագրություն)
Կ.Տ.

**Կ Ա Տ Ա Ր Ո Ղ**

<<ԼԱՅԹԻՆԳ>> ՍՊԸ
Ք. Երևան, Վարդանանց 26,
<<Ամերիաբանկ>> ՓԲԸ
Հ/Հ 1570025073070100,
ՀՎՀՀ 02613298

Տնօրեն՝

__________ Մ. Վարդանյան
(ստորագրություն)
Կ.Տ.